



219. ՊԱՌԱՎԻ ՀԱՅԵՐԸ ՈՒ ՂՈՆԱՂԸ

Մին հետ մի մարթ եր ա կենում, խուրջինին մեշին էրկու հատ հաց ա տինհում, քյոննում ա: Շատ ա քյոննում, քիչ ա քյոննում, քյոննում ա մին գլուղ մտնում, տրան ղոնաղ շեն ընթումում:

Հըրցնում ա, թա պա ես հիշտեղ կարող եմ ղոնաղ ինգյնել: Ասում են.—Մի պառավ կնեգյ կա, նա յա ղոնաղ ընթումում: Քյոննում ա էտ պըռավիտ տոն, տեսնում էտ պըռավիտ վեշ մին պան շոնի, լիհա մին քյեշա յա տակին քըցած, նստած:

Ասում ա.—Պառավ տատի, ինձ ղոնաղ ըրա:

Ասում ա.—Ղոնաղն աստըծուն ա, բալա, նստի:

էտ պըռավիտ էլ վեշ մին պեն շի ինում, վեշ քնիլու տեղ ա ինում, վեշ ուտիլի պան: էտ մարթը տեսնում ա, վեր մթնալ ա, սոված են, պիրում ա էտ էրկու հացը տոն օնում, մինը պըռավին ա տամ օտում ա, մինն էլ՝ ինքը:

Վերը, մին կուճի քյեշա յա ինում, էտ ղոնաղը յրան քնում ա, քնելուց հետո էտ պառավը տեսնում ա, վեր աննամուս պան ա էլի, շի կարելի, պետք ա անպայման էտ ղոնաղին հացին փոխը տա: Վերցնում ա, ուրեմն, տանը մին տասը-տասնհենգյ կլիթ ալիր ա ինում, պիրում ա թաքուն թաքուն ղոնաղան, վեր հաց թխի, էրկուը տա էտ մարթին, ճընապա քցի:

էտ քշերին կեսումը պառավը հացը թխիլու վախտը, թորենը վեր օզում ա վառի, էտ ղոնաղը ղըրթնանում ա, թա.—Պառավ տատի, հի՛նչ ես անում:

Ասում ա.—Հաց եմ թխում:

Թա՛ լափ լա՛վ կի՛նի, պատաս՞ ևս քըզնտի փառ կտորիմ:

էտ տղատ եր ա կենում, էտ մարթը վերը փեղը կտորում տ,
հացը թխում են: Պառավը հիշքան թոռնան տո՛ւս ա օնում, էտ
դոնադրտ օտում ա, հինչ վեր տո՛ւս ա օնում՝ դոնադն օտում ա,
թա քանիսն ա ինո՛ւմ, էտ կարալ շեմ ասեմ, վերը մընում ա մըն
հաց. թոռնան տո՛ւս ունելիս պառավը տինո՛ւմ ա ժընգնին, թա
ասում ա.—Բալա, էս մին հացս իմա ա, էլ տակին պան շեա թո-
ղալ:

Թա՛ պառավ, իշտահըս հնլն լնվ ա, էտ էլ տու օտեմ:

Թա՛ բալա, հիշտեղ ե՞ս քյոննո՛ւմ:

Թա՛ քյոննո՛ւմ եմ ըստուծու կոխկը:

—Յա՛ղուղ:

Ասում ա.—Իշտահըս կապ ա, քյոննո՛ւմ եմ ըստուծու կոխկը,
վեր իշտահըս պննն:

Թա՛ լափ լնվ կի՛նի, քյինն, բայց ըստեղավ չի կլնա:

